

Լ Ո Յ Ս Պ Ա Ր Ո Ն

ՆԱԽԱՏՈՒ ԹԵՐԴԱՌԻՅ

Ա.

Զո՞ւ այդ խուժան մոլեզին
Զեռս յետ կապեալ ու ն իյանուր,
Աղաղակաւ առտանին,
Զմիւնամք խըռնեալ կոխեալ յահուր.
Մի յանցաւո՞ր պատապարտ,
Կամ աւազա՞կ արիւնարրու,
Թէ ապըստամք մահապարտ
Զումէ լիցին վըրիժառու:

—Աչ. Թէ շընթայքն յանցաւորի,
Բայց է ճական իւր անմեզի:

Դա պարմանի զուարթափայլ,
Աչօք գիմօք իւր եռանդուն,
Որ անվեհեր անայլայլ
Դընայ ըզիետ կամաց նոցուն.
Եւ ընդ բիւրուց լուտանաց
Զոր ըզգայսեն յերեսն անմեզ,
Եւ ընդ բիւրուց մաղթանաց
Զոր արկանեն առ նա շըքել,
Դա զայս մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Ատեան բացաւ իդատել,
Եւ դատաւորն ողոքաւոր
«Որդեսա՞կ, քեզ զի՞ է մոլել»,
Անէք առ նա իգութ պըզուոր,
«Թէ մանկութեան եւ գեղոյդ
«Գու անըզգայ իցես, ո՞վ Լոյս,
«Դթեամ ծաղիկ ես մարմնոյդ
«Յոր սըփուեցից ըզիեշտ եւ լոյս»:
Բայց նա մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Բա՛թէ, փոխեալ անդանօր
Դատաստանաց կարգ եւ օրէն,
Որ աղաչէն՝ դատաւոր
Եւ կապեան այն է որ ժըխտէն.

Նա աղաչէ շնորհել կեանս,
Սա ըզշլորդին այն ընթադրէ.
Նա զանմեղին զուր մեզանս
Բառնալ նըզնի կրօնից դըրժող.
Սա զայս մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Աղաչանաց անդ ըզիետ
Ար ցընդեցան անգամագիտ,
Հապանալիք չարալէտ
Եկին բաչին խախտել ըզմիտ.
«Թէ չըթողուս, ասէ, զայդ
«Կրօնն մոլոր ըստոյզ թնդ մերս»
«Կրոգուեալ զի քեզ բարկանայթ
«Ըզրարկութեան թափեմ շանմեներս»:
Եսկ նա մի տայ պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Եւ յարձակին փոյթ ընդ փոյթ
Դահինք վառեալ իզէնս ահեղ,
Իբրեւ իդաշտ մարտի դռոյթ
Տալով յանգէն մարմինն անմեղ.
Անզէն . . . ոչ, Լոյս չըր անզէն,
Սուր եւ ասպար ունի նա Խաչ,
Յոր պատրսպար հոգեզէն,
Իմենամարտ մատչէր յառաջ,
Զայս մի տալով պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Բայց յայն տանջանս սաստկագոյն՝
Յոր սոսկային տուռդը եւ ինընին՝
Լուծաւ մարմին պատանւոյն,
Այլ կայր անըզժ, անշարժ ոգին.
Թառամեցաւ մահակիր
Իբր ըզշուշան անկեալ յարօտ,
Փակին շըրթունք վարդածիր,
Աչք կըկոցին երկնակարօտ.
Բայց սիրտ մընչէ յաւիտեան.
«Ես Քրիստոսի եմ զօրական»:

Բ.

Ո՞վ զօրական քաջամարտ,
Քեզ երանի՛, հասեր մարտին քում յաւարտ,
Հասեր յաղթող անպարտելիդ իհանդէս,
Պրսակելով յարիւնաներկդ անդ իգէս:

Փառացդ՝ յերկնից մինչ յերկիր
Անմահունակ ցոլան ճաճանչք լուսամիք,
Եւ սիրտք վառին մեր յայն նըշոյլ եռանդուն
Ըզիետ տենչալ յոր գեղեցիկս հասեր դուն:

Բայց մեր կըուուեալ սիրտք իփուշ՝
Զոր այլընդայլ կարծեմք ծաղլունը քընքուշ
Ըզիետ նոցա յամեմք ծուլամք ծաղկաքաղ,
Եւ խտատասկ կապեմք պըսակ մեզ, աւա՛ղ:

«Յ՞ն դու, ո՞սուրբ պատանի,
Դուզոր պատուեմք այսօր առ քոյդ տապանի,
Ցաւոցս ըզցաւըս քո տըւեալ մըխիթար
Ըզսիրտըս մեր ըզժանրացեալս իվե՛ր առ:

Ահա շիբմիդ խեղան
Ըզսիրտս հանեմք իպատարագ անարեան.
Ո՞հ դու ըզիուր որով լըցաւ սիրտդ անկէզ՝
Արկ եւ ծախի առ էն եւ մերս ողջակէզ:—

Գ.

Լո՞յս, սիրտս ըզքեզ սիրեա՛ց յոյժ,
Դում յիս ծընաւ ընտանի.
Թէսկէս ըզքեզ ծանեայ նոր,
Բայց ըզձակամ է ոգի.
Կարծեմ ըզքեզ քարեկամ
Ինձ այս կենաց եւ ընկեր.
Որպէս թէ նոյն յաղերաց
Արբեալ ըզկամն էր սիրտ մեր:

Ասեն թէ դու չունէիր
Քեզ քարեկամ ընկեր զոք,
Այլ թէ անկեալ աստ պանդուխա'
Ունէիր սիրտ լի ցաւօք.
Ծովուն երբեմն առ ափամք
Անշարժ յոտին զերթ ըզվէմ
Չալեաց շառաչ լըսէիր
Լըոիկ մընչիկ թաղծադէմ.

Եւ կարծէիր թէ բերեն
Քեզ սիրելեացդ ըզիագագ,
Էզմօր համբոյրս անուշակ
Եւ քեռ ըզձայն սիրանուագ.
Եւ սիրտ հալեալ իկարօտ
Խոր հառաջանս անդ իեղոյը,

Եւ իբր ըզգետ իծուլու
Թափէր հեղեղս հազար բիւր :

Եւ այլ երբեմն իկանաչ
Ելեալ ըըլոցն իկատար
Կալամախից նըստելով
Էնդ ըստուերօք լայնատար,
Հրատապ սըրտիդ խընդըէիր
Հեղուլ հովիկ կամ շուք սեաւ,
Եւ մերձաւոր ջինչ յաղբիւր
Նիշուցանել ըզժարաւ:

Քանից ըզքեզ, Լո՞յս, քանի՛
Լուսին գիշերց շողշողուն
Եգիտ անդէն հըսկելով
Իբր ըզկաննեղ սեղանոյն.
Քանից անգամ եւ աստեղք
Զիւրեանց նըշոյլըս տըխուր
Ոչ խառնեցին ընդ վըտակս
Որ քոց յաշաց զեղանիւր :

Դ.

Ո՞վ սուրբ պանդուխտ, Ո՞ոլ ըզքո
Յիշեմ ըզցաւս եւ ըստէպ,
Քանզի այսու լոկ սըրտիս
Թեմեւացի երաշխէպ,
Որ հայրենեաց եմ եւ ես
Թափառական վըշտագգեաց,
Եւ ես քէս արտասուեմ
Յանձուկ կարօտ սիրեւաց :

Եւ ես, ո՞վ Լոյս, ոի եւ ես
Հասակակցի քեռ քոյին
Այն ինչ արիւն իյոգւոչ
Ետու ողջո՞յն մի վերջին . . .
Որ չիք եւ ինձ մայրենի
Ժըպիտ' բերողն ըզխախոյս,
Եւ չտեսանեմ զոր վասն իմ
Թափեալ անհատ արտասուս: . . .

Լո՞յս, դու սըրտից վըշտահար
Մրացի՛ր յերկնից ըսփոփիչ,
Մինչ արտասուք իմ թանան
Նիբմիդ ըզուրը կափարիչ.
Եւ ընդ ծառովս այս իգում
Զոյր հովանին սիրէիր
Միրտս իտօնիդ յիշատակ
Ծըփի 'նդ երկինս եւ երկիր: